

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի

հունիսի 8-ին ZOOM հարթակում կայացած առցանց Գիտական Խորհրդի N9 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 30-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամի առաջադրում

/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/

2. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգը հաստատվեց

1. **ԼՄԵՑԻՆ.** դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ առաջադրելու հարցի վերաբերյալ: Իր խոսքում նա նշեց որ առաջադրվողը պետք է ունենա պատասխանատվության մեծ զգացում և լինի համալսարանի նվիրյալ: Մ.Ա.Գրիգորյանն առաջարկեց փոխդեկան, տեխ.գ.թ. Սարգիս Քելյանի թեկնածությունը: Նա նշեց նաև, որ Ս.Քելյանն ունի պարտաճանաչության և պատասխանատվության մեծ զգացում, ինչն ակնառու է թե՛ դասախոսական և թե՛ փոխդեկանի պաշտոնում իր գործունեության ընթացքում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, դոցենտ Վահագ Գրիգորյանը նշեց, որ առաջադրվող թեկնածուն պրպտող է, աշխատասեր և արժանի է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ առաջադրվելու:

- Հաստատում եմ Մ.Գրիգորյանի առաջարկությունը և կոչ անում «Կողմ» քվեարկել:

Սերվիսի ամբիոնի վարիչ, դոցենտ Սեյրան Սուվարյանն ասաց, որ ճանաչում է Սարգիս Քելյանին որպես նույն ամբիոնի դոցենտ և Ս.Քելյանը հանդես է եկել լավագույն կողմերով, ունի բավականին շատ արժանիքներ, որոնց շարքում են

նվիրվածությունը ֆակուլտետին, ընդգծված աշխատանքը՝ ի բարեկեցություն ֆակուլտետի և համալսարանի:

- Առաջարկում եմ հաստատել Սարգիս Քելյանի թեկնածությունը,-խոսքի ավարտին ասաց Սեյրան Սուվարյանը:

Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը նշեց թեկնածու Սարգիս Քելյանի պարտաճանաչությունը և հոգատարությունը, որը նա ցուցաբերում և ներ է դնում ֆակուլտետում կատարած աշխատանքներում:

Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Մարինե Մկրտչյանն ասաց, որ Սարգիս Քելյանը այն հազվադեպ անձանցից է, ով գործով է ցուցադրել աշխատելու կարողությունը: Մ.Մկրտչյանը նույնպեսի կոչ արեց կողմ քվեարկել առաջադրված թեկնածուի օգտին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կողմ՝ 29, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0 բաց քվեարկության արդյունքներով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ **հաստատել** փոխդեկան, տեխ.գ.թ. Սարգիս Քելյանի թեկնածությունը

ԸՆԹԱՅԻՆ ԿՆՄԱՆՈՒՄ

2. ԼՍԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Գոհար Ալբերտի Ղազինյանի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Գոհար Ալբերտի Ղազինյանի ատենախոսական թեմա հաստատել «Զրոգտագործում, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հարցերը Հայաստանում» վերնագրով, իսկ գիտական ղեկավար՝ նշանակել ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Վ.Պ.Վարդանյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Գոհար Ալբերտի Ղազինյանի ատենախոսական թեմա հաստատել «Զրոգտագործում,

բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հարցերը
Հայաստանում» վերնագրով, գիտական ղեկավար՝ նշանակել ամբիոնի պրոֆեսոր
տեխ.գ.դ. Վ.Պ.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան